

Տարեկան գինը 10 րուբլի, կես տարեկանը 6 րուբլի  
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզումով:

Յայտարարութիւնների համար վճարում են  
խրաբանչիւր բառին 2 կոպեկ:

Տէլէֆոն № 253.

ՇԱՐՈՒՆԱԿԱՐԻ

## ՄՇԱԿ

(25-րդ ՏԱՐԻ)

ՔՐԻՍՏՈՍԻԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻԱՆՈՒԹՅԱՆ ԼՐԱԳՐԻ  
ՆԵՐԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տարեկան գինը 10 րուբլի, կես տարեկանը 6 րուբլի

Հասցեն. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ». Արտատպագրութիւնը TIFLIS, Rédaction «MSCHAK».

Ով անհատ, Արամ, Նուէ, Մարիամ, Վարդապետ, Գրիգոր Նազարե-  
թեան երբ, Միքայէլ փարսադանեանը խորին վատով յայտնելով ազգականնե-  
րին և ծանօթներին առաջինը ամուսնու, երկրորդը սիրելի զօր, վերջինը անեղջ

ՄԱՐԳԱՐ ՆԱԶԱՐԵԹԵԱՆԻ

մահաւան մասին խորում են հորձ բերել հանգուցեալի թաղմանը երեքշաբթի, յունվարի  
21-ին, առաւօտեան ժամը 10-ին, կաթօրիկեան փողոց, տուն № 11, դէպի Ձգրաչէնի եկե-  
ղեցին: Թաղումը խօջիվանքի զերեզմանատանը:

1—1

ԲՈՎԱՆՈՒԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կայ և մի ուրիշ պատճառ. Հէյտերի նամա-  
կը Ուէստմինսթարի դռներէն. ՆԵՐԿԱՆ ՏԵՍՈՒ-  
ՓԻՆԻ. «Արարատ» ամսագրի մի յօդուածի առե-  
թով. Նամակ Բաթումից. Նամակ Խմբագրութեան.  
Ներքին լուրեր. ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Վեր-  
ջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից,  
Արտաքին լուրեր. ՀԵՆԱԳԻՐՆԵՐ. ԲՈՐՈՍԱ.  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անգ-  
լիական պարլամենտում:

ԿԱՅ ԵՒ ՄԻ ՈՒՐԻՇ ՊԱՏԱՆԱԿ

Աւելի պերճախօս հերքում, քան Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

(Թղթակցութիւն)

1 օր 7 օր, յունվարի 8/20-ին

Անգլիոյ խորհրդարանին նստաշրջանը, որ ընդ-  
հանրապէս փետրուարի սկիզբները կը բացուէր,  
այս տարին քանի մը օր կանխեց: Ուրեմն միա-  
կեանով թաղարանները 26-րդ և Վիկթորիա  
թաղարանին 14-րդ խորհրդարանին 3-րդ նստա-  
շրջանը սկսաւ երէկ: Չեմ ծանրանար սովորա-  
կան արարողութիւններուն վրա: Կարեւոր խնդ-  
րը զանաձայն էր, զոր լորդ շանսըլը կար-  
գաց լորդերու ժողովարանին մէջ:

Միջազգային խնդիրներուն մէջ արեւելեան  
հարցը առաջնակարգ տեղը դրած ըլլալով  
թաղարանին ալ էն առաջ աղօր վրա կը խօսի:  
Սակայն ուշագործ պարագայ մըն է այն, որ  
զանաձայն ընաւ չարտասանէր «Հայ», «Հայաս-  
տան», կամ մինչև իսկ «Հայաստանի գաւառներ»  
բացատրութիւններն մէկը: Խնդիրը թիւրքիոյ  
վրա է: Ու նաեւ այս առթիւ կը յիշատակուին  
«Բարբիդի դաշնագիրը ստորագրող պետութիւն-  
ները», և ոչ թէ Պերլինի դաշնագիրը: Նախորդ  
նամակով մը կը բացատրէի թէ հայկական  
խնդիրը վերածուած է ընդհանուր թիւրքիոյ  
խնդրին: Այս անգամ իրողութիւնը կը հաս-  
տատուի երկուսն ալ զանաձայն:

Ներկայացնեմ այն կտորը, որ կը վերաբերի  
հայերին, եթէ հեռագիրը մինչև հիմա չէ հա-  
ղորդած.

«Ի մ լորդեր և ճէնթ լ մէն ներ»

«Իմ յարաբերութիւններս բոլոր պետութիւն-  
ներուն հետ կը շարունակին բարեկամական  
ըլլալ:

«Չարհուրելի կոտորածները, որ տեղի ու-

Ձ-ի յօդուածը, որ մենք անցեալ ան-  
գամ արտատպեցինք «Русскія Вѣ-  
домости» լրագրից, երեւակայելի դը-  
ժուար է: Եթէ «Московскія Вѣдомости»  
կամ «Новое Время» լրագրիցը շատ  
քիչ յարգանք անգամ տաճելիս լինեն դէպի  
փաստը և ճշմարտութիւնը, պէտք է հը-  
րապարակով յետ վերցնեն իրանց ամբողջ  
զրպարտութիւնը հայերի դէմ, որովհետեւ  
պաշտօնական թերթը արդէն ցոյց են  
տալիս, որ հայերը ոչ թէ միայն չեն դրա-  
ւել կողմանեան արմինադարացիայի մէջ բո-  
լոր տեղերը, ինչպէս պնդում էին Ստրաս-

Կարգ մը ձևակերպութիւններէ ետք, վիճա-  
բանութիւնը սկսաւ զանաձայն պատասխան-  
ելիք ուղերձին վրա:

Լորդ Բիմպրիլի նախորդ արտաքին գործերու  
նախարար լորդ Ռոզպլէրիի զանգիւն (կապիւնտ)  
մէջ, երկու օր առաջ ազատական լորդերու վա-  
րիւր (լիդը) ընտրուեցաւ. հետեւեալ ինքն էր,  
որ ուղերձին առթիւ պիտի խօսէր լորդերու  
ժողովարանին մէջ: Ահա ինչ որ կը վերաբերի  
հայկական խնդրին:

Լորդ Բիմպրիլի նախ խօսեցաւ վենեցուելայի  
խնդրին առթիւ կատարուած միջազգային իրա-  
ւարարութեան վրա. յայտարարեց թէ «բոլոր  
կուսակցութիւնները մեծ գոհունակութեամբ տե-  
սան վերջացումն այն հակառակութեան, որ ժա-  
մանակ մը պիտի կրնար ամենադժբաղդ հետե-  
ւանքներ ունենալ»... Յետոյ անցաւ հայկական  
խնդրին: Բառ առ բառ. առաջ կը բերեմ իր  
խօսքերը, և ընդդէմ եղած դիտողութիւնները:

Լորդ Բիմպրիլի: «Կը փափագէի, որ Հայաս-  
տանի մասին ալ մի և նոյն եղանակով խօսվի:  
Կարծեմ բոլորովին անպէտ պիտի ըլլայ այս  
առթիւ անգամ մը ևս արտաբայելի սուսկումի  
զգացումը, որ տիրեց ամբողջ երկրին մէջ,  
հայերուն կոտորածին առթիւ: Այդ զգացումը  
ընդարձակորէն, պիտի կրնամ ըսել, ընդհանրա-

անի բոլորի հրապարակախօսները, ոչ  
թէ նոյն իսկ նրանք մեծամասնութիւն չեն  
կազմում, այլ մեր արմինադարացիայի մէջ  
հայերը բռնում են շատ աննշան տեղ, ա-  
ւելի աննշան, քան թէ մինչև իսկ թուրքերը:  
Բայց որովհետեւ խաւարամիտ լրագրիչները,  
ինչպէս հայոց մամուլի, այնպէս և ուս-  
տաց մամուլի մէջ ոչինչ բանի այնքան  
թշնամի չեն, որքան ճշմարտութեան  
և զրական մաքրութեան, ուստի փաստ  
կարող ենք տեսլ, որ նրանք ոչ թէ յետ  
չեն վերցնի իրանց խօսքերը, այլ դուրս  
պնդեն, թէ պաշտօնական «Кавказскій  
Календарь»-ի թերթն էլ ճիշդ չեն, շին-  
ծու են և հնարած հայերի ձեռքով... Յի-  
մարութիւնը սահման չունի...»

Թղթիւրով այդ տեսակ անպնդի պնդու-  
թիւններին շարունակելու այդ կեղտոտ  
ճանապարհով «Իրկիլ հայրենիք», մենք  
մեզ թոյլ կը տանք, իբրեւ յաւելում զ.  
Ձ-ի յօդուածին, մատնանիլ անկ և հե-  
տեւեալ փաստի վրա:

Կովկասում տեղի ունեցող աւազակու-  
թիւններին մէջ հայերը շատ չնչին, կամ  
բոլորովին մաս չունեն, ոչ թէ միայն այն  
պատճառով, որ մեր արմինադարացիայի  
մէջ հայերը շատ աննշան տեղ են բռնում,  
այլ և այն պատճառով, որ Անդը-  
կովկասեան հայ տարրը, իր բոլոր հա-  
կովկասեան ընտանոթութեամբ, և վերջապէս իր անմարման միանգա-  
մայն անընդունակ է նախ իր միջից աւա-  
զակային խմբեր դուրս բերել և երկրորդ  
աշակցել, թե առ այդ խմբերին: Վիճա-  
կաբարական տեղեկութիւնները անհերքելի  
կերպով կարող են ապացուցանել, որ Կով-  
կասում եղած և այժմ ընդթիւն ունեցող  
բոլոր նշանաւոր աւազակները, ինչպէս Նա-

կան կերպով արտաբայուեցաւ այս երկրին մէջ  
Բուն խնդիրը, զոր նկատողութեան պիտի առ-  
նենք այսօր, հետեւեալն է: Ամենէն կարեւոր և  
ամենէն աղետալի գործը ինչ վիճակի մէջ է  
այսօր: Կը զգամ և կարծեմ թէ ամբողջ եր-  
կրին ալ կը զգայ թէ հասած է ժամանակը, որ  
ընդդիմադիր ազնուական մարքիւր (լորդ Սոլդ-  
պէրի) ամբողջապէս պարզէ այս գործին արդի  
վիճակը: Չեմ կրնար ըսել թէ ինքնինքն ամբող-  
ջապէս քաջալերուած կը զգամ հատուածին  
(զանաձայն) գործածած բառերէն: Նախ և ա-  
ռաջ կը վերաբերի—որուն համար կը զարմա-  
նամ—Բարբիդի դաշնագրին, և աւելի անտիկն ալ,  
երբ կրնէ թէ մեր առջին պիտի դուրս թուղ-  
թեմը, որոնք ցոյց պիտի տան թէ ինչ նկատու-  
թեամբ պետութիւնները օսմանեան կայսրու-  
թեան արդի վիճակը իրենց Կ. Պոլսոյ դեպաւ-  
ններուն յատուկ խորհրդակցութեամբ առարկայ  
ըլին: Չեմ ենթադրեմ թէ ոչ ոք այս նիւթին  
վրա տեղեկութեան պէտք ունենայ: Ենթադ-  
մենք ալ դիտենք—և շատ աղետալի պատճառ-  
ներ կան—որոնք պետութիւններու նկատառու-  
թեանը ենթարկեցին օսմանեան կայսրութեան  
արդի վիճակը: Ինչ որ մենք կողմէնք գիտնալ  
այն չէ թէ խնդիրը նկատառութեան ենթարկ-  
ւած է, այլ թէ ինչո՞ւ նկատառութեան ներքե-  
ն, և թէ ինչ եղած են այդ նկատառութեան հե-  
տեւանքները, և թէ բանակցութիւններուն արդի  
վիճակը ինչ է: Ազնիւ մարքիւրը (լորդ Սոլդպէրի)  
կիւրծով ճառար մէջ—չառ ճարտար ճառ մը  
—չուղեց, և կրնամ ըսել թէ լաւ պատճառնե-  
րով, ու և է տեղեկութիւն տալ այս նիւթին  
վրա: Բայց շատ ապահովիլ ընդթ ունեցող յայ-  
տարարութիւն մը ըրաւ. ըսաւ թէ «Կրնամ  
միայն ձեռք յայտարարել, թէ ամեն ժամանակե-  
կեան հիմա եւրոպական կոնցրետը շատ յաջող  
վիճակի մէջ է վերջացնելու համար այն ծրա-  
գիրը, որով պիտի ջնջուին Եւրոպայի հարաւա-  
րին—արեւելեան մասին այս չարքները: Հա-

րի, ֆեարամ, դուրս են եկել թուրքերից,  
որ աւազակային խմբերը, համարեա ա-  
ռանց բացառութեան, կազմուած են մահ-  
մէտական տարրից, և բացի դրանց, թուրք  
ժողովուրդն է, որ կրօնական, կամ տեղա-  
կան որ և է պատճառով թե է տալիս այդ  
խմբերին, կամ թագցնելով նրանց, կամ  
ապաստան տալով, կամ խանգարելով ազ-  
մինադարացիային՝ նրանց բռնել և ոչնչաց-  
նել: Դրան ապացոյց ամենավերջին փաստը՝  
Նաբիի խմբի ամբողջ արշաւանքը...»

Հայ տարրը թէ Կովկասում, թէ նոյն  
իսկ թիւրքիոյում և Պարսկաստանում, իր  
բոլոր հակամեծերով, իբրեւ խաղաղ, երկ-  
րագործ, նստակեաց ժողովուրդ, երբեք սէր  
չէ ունեցել դէպի աւազակութիւնները, քա-  
նի որ նա իր ընտանոթութեամբ շատ էլ սէր  
չունի դէպի զէնքը, դէպի արեւելք: Եթէ  
թերթները, օրինակ «Իրկիլ» գաղափարա-  
նական շրջանի տարեգրութիւնները, հեշ-  
տութեամբ կը գտնէ այն եզրակացու-  
թեան, որ աւազակներին վերաբերեալ պրո-  
ցէսներին մէջ թուրքերը կազմում են 95  
տոկոս, իսկ մնացած 5 տոկոսը միայն կազ-  
մում են Անդրկովկասի քրիստոնէայ ժողո-  
վրդին պատկանողները, որոնց թուում և  
հայերը:

Եւ մեր կարծիքով, Կովկասեան աւազա-  
կութիւններին հարցում հայերը պէտք է  
ճանաչվեն իբր անմեղ և անմասնակից ոչ  
թէ միայն այն պատճառով, որ արմինադ-  
արացիայի մէջ հայերը շատ աննշան տեղ  
են բռնում, ուրեմն և չեն կարող ազդել  
աւազակութիւններին բազմապիսեւ և քա-  
նալու վրա, ինչպէս այդ գեղեցիկ կերպով  
ցոյց է տալիս Մոսկուայի ազատամիտ լրա-  
գրի շնորհալի աշխատակիցը, այլ և այն  
պատճառով, որ հայը, իր հակամեծերով,

ճողով ընդունեցանք այն տեղեկութիւնը, բայց  
ինչ որ հիմա մենք կը հարցնենք, և ինչ  
որ կը կարծենք թէ ամբողջ երկրին ընդհա-  
նուր փափագն է դիտնալ, այն է թէ ինչ պա-  
րագանք հնարուած ըլլին ազնուական մարքի-  
ւրին յայտարարելու, որ գործերը աւելի նպաս-  
տաւորեալ վիճակի մէջ են, և թէ ինչ եղան  
բանակցութիւններու արդիւնքները: Բարբիդի դա-  
շնագրին վրա խօսեցաւ, և պէտք է ըսեմ թէ  
չառ զարմացալ տեսնելով, որ հիմա 41 տար-  
ւան հնութիւն ունեցող Բարբիդի դաշնագիրը  
այս առթիւ առաջ կը դրուի: Կը մտածեմ թէ  
աւելի նորազօյն դաշնագրի մը կայ, Պերլինի  
դաշնագրի մը, և զարմանալ շատ աւելի եղաւ,  
որովհետեւ ինչեք թէ ազնիւ մարքիւրը յայտա-  
րարած է, որ այդ դաշնագրին արամադրութիւն-  
ները միմիայն են և անիրականութիւն: Ազնիւ  
մարքիւրը կրնէր թէ այդ անիրականալի և անու-  
րոշ երաշխաւորութիւններուն տեղ ուրիշ դաշ-  
նագիր մը դրուած է, և կարծեմ թէ տեսակ մը  
զարգ յանձնառութիւն էր, որուն մէջ միայն եր-  
կու պետութիւն գործ ունէին և որուն պայմա-  
նադրութիւնները ապահովապէս կրնային գործա-  
դրուիլ: Ի՞նչ եղաւ այդ դաշնագիրը: Դուրս ան-  
շուշտ դիտեք թէ ինչ էին այդ յանձնառութիւն-  
ները:

«Նախ և առաջ օսմանեան կառավարութիւնը  
հանգեցաւ, կամ աւելի ճիշդը՝ խոստացաւ, որ  
բարեկարգութիւններ պիտի գործադրուին հայոց  
համար: Մենք ալ մեր կողմէն յանձն առինք  
պայտպանել թիւրքերը, եթէ փոքր-Ասիայէն ուս-  
ները յարձակին. և որպէս զի այս յանձնառու-  
թիւնն իսկ կատարելու կարող ըլլանք, ընդունեցինք  
Կիսլուս կղզին Բարբիդի դաշնագրին եղան հայոց  
համար: Ոչ փոխանակ ասոր հայերը ջարդուե-  
ցան (Ազատականներէն ժափեր): Պարտաւորուած  
ենք ամեն ժամանակ փոքր-Ասիայի մէջ թիւրքե-  
րը պաշտպանելու ուսմանը: Դէմ է Չեմ կարծեմ  
թէ այս երկրին մէջ գտնուել մէկ մարդ մը իսկ,

իր բնաւորութեամբ, իր տեսակետներով, իր ամբողջ աշխարհայեցողութեամբ ձգտողութեամբ չունի զէպի աւազակային կեանքը, զէպի ապրումները և զգոյթեան այն եղանակը, որ ձեռք է բերվում սրով և արիւնով:

ՀԵՅՏԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՈՒՅՍՄԻՆՍՏՐԻ ԴՈՒՔՍԻՆ

Սէօր Արտուր Հէյտէր, որ ուղարկված էր հնդկաստան ֆոնդին կողմից Բաղարիւմ քանդակաւորութեան, թէ ինչպէս է կազմակերպված այնտեղ հայերին խնամելու գործը, ուղղել է Ուստմիստրի գործին հետեւել հաղորդագրութեան:

«ՏԵՐ ԴՈՒՔՍԻՆ»

«Սօֆիայից գրած իմ վերջին հաղորդագրութեան մէջ ես յիշել էի, որ Բաղարիւմ թողնելուց առաջ ես մի խօսակցութիւն ունեցայ բաղարիւմեացի առաջին միջնորդ Ստեփանի հետ հայ փախստականներին Բաղարիւմ հաստատելու մասին: Ստեփանը յայտնեց, որ նա պատրաստ է առաջարկել Սթեփանիին՝ յատկացնելու ձրիստեպի հող հայ գաղթականներին գիւղ կազմելու նպատակով: Գծադրաբար՝ մանրամասն քննութիւնից, որ նա կատարել է փոխ հրապարակի հետ միասին, երկուսը, որ հայ փախստականները քաղաքաբնակ ժողովրդից են՝ Նրանց նախկին պարագայումները եղել են մանր խնամքով պահպանված, սակայն իրենց, դերձակութիւն, կօշկակարութիւն, վերամակակարութիւն, դռնապանութիւն և հասարակ մշակութիւն (ոչ հողագործութիւն): Սակայն ես յայտնեմ, ասաց Ստեփանը, որ հայերը գործ կը գտնեն առաջիկայ գարնան, ի հարկէ, նրանցից շատերը հէնց որ Կ. Պոլսում կը վերականգնվի կարգ ու ապահովութիւն, կը վերադառնան այնտեղ և կը նորոգեն իրենց նախկին պարագայումները, եթէ մասնաւոր նպատակ ֆոնդը օգնի նրանց մասնաւորապէս փողով, միւսները գործ կը գտնեն երկաթուղու երկու գծի վրա, որ կը սկսվեն շուտով շինվել: Կապալառուներին մէկը արդէն բանակցում է հայ փախստական մշակների հետ, որոնց մասին լաւ համարումը ունի: Բացի այդ, վարչապետ չինվում է մի նաւամատոյց, որի կապալառու Հայրապետեան յայտնեց ինձ, թէ նա վարձել է արդէն հարկեր մարդ և պէտք է գարնան աւելացնի իր գործը: Վերջապէս խաղողի այգիներում ևս կան գործեր թնթիւ և հնչոտ, այգետէ:

որ մտքէն անցնէ թէ պէտք է վերադառնալ այդ իրեր հնչոտ, լինցած համարուած քաղաքակալութեան: Ուրիշ բան չի մնար, լորդեր, բայց եթէ Կիպրոս կղզին, որուն գրաւումէն մեզի հեղած օգուտները երբեք յատուկ կերպով չեն տեսնուած: Եւ կը խոստովանիմ թէ շատ պիտի սիրէի, որ կառավարութիւնէն յայտարարուէր թէ այդ դաշնագիրը հիմա ինչ վիճակի մէջ է: Իրենց կարծիքով բոլորովին մեռած է. արդեօք անկէ մաս մը դեռ գոյութիւն ունի, և թէ այդպէս է, կառավարութիւնը դիտում ունի արդեւ նաւորել զայն: Թերեւս անտեղի պիտի չըլլայ այս խնդրի մասին երկրին ընդհանուր քաղաքականութիւնը նկատողութեան առնել: Անցեալին մէջ քաղաքականութիւնը մը էր ստիպել և պարտաւորել օսմանեան կառավարութիւնը բարեկարգութեան, յուսալով որ այս եղանակով կարելի կըլլար մի անգամ ընդմիջող հեռացնել օսմանեան կայսրութեան կործանումէն ծաղկելը սոսկալի խնդիրը: Այս քաղաքականութեան վրա թափուած բոլոր նախադէպերը չեմ կարծեր որ արդարացի եղած ըլլան. չեմ կրնար երևակայել Եւրոպայի մէջ արտաքին գործերու պատասխանատու անձնակազմութիւն մը, որ առանց խորին երկնիւղի չը մտաբերէ թէ ինչ կրնայ պատահել երբ այդ քաղաքական տեղի ունենայ (ծախեր): Կը կարծեմ թէ անցեալին պետական անձնակառութիւնները իրաւունք ունէին—թերեւս յուսալով հակառակ յոյսի—երբ ամէն կարելի միջոց կը գործադրէին այդ քաղաքական առջնը առնելու, պարտաւորելով օսմանեան կառավարութիւնը՝ կառավարական հանդուրժելի ձև մը ներմուծելու ոչ միայն իր ստորոնակներուն, այլ և մասնաւորապէս հրատարակողներուն, այլ և երկրին համակարգը միայն քրիստոնեայ բնակիչներով չէ սահմանափակուած: Իմ լորդեր, կրնամ թէ նախորդ պետական անձներ արդարացած են, բայց զժառանգաբար պատմութիւնը ցոյց կը տայ, որ այսպիսի քաղաքականութիւն մը տարօրինակ կեր-

բեր ուրախութեամբ գործ կը տան թէ հայերին, և թէ բաղարիւմեացիներին:

«Կանանց և աղջիկներին համար աշխատանք գտնելու գործը վարչապետ կազմակերպել է օրիորդ Ֆրէդեր, որի նախակից ես առաջ կը բերեմ հետեւել կտորը:

«Գուր կուրախանք իմանալով, որ բաղարիւմեացի կառավարութիւնը թողել է մեր կարգադրութեան տակ մի երկրորդ ընդարձակ բնակարան, որի մէջ մենք կարի արհեստանոց ենք բացել և 95 օրիորդի գործ ենք տուել: Ես ծրարել եմ աւելի լայն գործ, որով կարելի է դաւադեցնել 150 անձ կանանցից և օրիորդներին: Ֆրէդերի պատգամով, ուր բացել ենք մի կարի արհեստանոց, զեկտեմբերի 23-ից զբաղված են տասնէն հինգ կանայք և կընդունվին դարձեալ տասնէն կին: Այդ կանայք շատ գոհ են և երախտաւարտ, որ կարողութիւն ունեն սեփական աշխատանքով ապրել: Մանուկներին համար բացել ենք վարչապետ մի գեղեցիկ դպրոց, որի մէջ ուսանում են 106 աղջիկ և աղայ, զբաղվ իրանց ամենաբարձրագիւղ դրութեան մէջ: Մտադրութիւն կայ բանալ և մի ուրիշ դպրոց:

«Մօտ 8000 բոլորովին թշուառացած անձ ապաստան որոնեցին բաղարիւմեացի հողի վրա՝ Նըրանը կորցրել էին իրանց տները, իրանց զբաղմունքները, իրանց գանձած փողերը և շատ դէպքերում իրանց ընտանիքի աշխատանքը սնդուկներին: Նրանք անօգնական էին. անգլիական ազգի օգնութիւնը մեծ գործ կատարեց թշուառութիւնը ամբողջում համար: Հայ գաղթականները թէ իրանք անձամբ և թէ իրանց առաջնորդներին միջոցով շատ և շատ անգամ յայտնեցին ինձ իրանց երախտագիտական զգացմունքը դէպի անգլիական ժողովուրդը, որ փրկեց իսկուշի պանդուխտներին սովից, որ աւելի սարսափելի է, քան նոյն իսկ սուրբը:

Ձեր հաւատարմիմ Արտուր Հէյտէր

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԻՏԻՆ

«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՒ ՄԻ ԶՅՈՒՈՒՄԻ ԱՌԻՍՏՐԻ

Գեռ ևս ամենքի յիշողութեան մէջ թաքնւած են խաւարամիտ մամուլի այն կատարի յարձակումները, որ տեղացին Արիստակէս արքայի սկզբնական իրա «Մշակի» միջոցով Արչէն երէցին տուած պատասխանի առիթով: Սրբազանի ան-

պով իր նպատակին չի հասաւ: Այդ քաղաքականութիւնը բնաւ իր նպատակին չի հասաւ, վասն զի կերեւայ, որ օսմանեան կայսրութեան վարչութիւնը չեմ լեցուն է անբուժելի պակասութիւններով, որոնք գործնականապէս անհնարին կընային թղթի վրա գրուած բարեկարգութիւններով: արդիւնաւորումը. այդ ծրարները ինքնին կըրնան շատ լաւ ըլլալ, բայց բանի որ չեն կրնար գործադրուիլ պարզեւտ և արդիւնաւոր վարչութեան մը, չեն կրնար ոչ յարատեղ ոչ վերջնական արդիւնքի մը յանգիլ: (Ծախեր): Իմ լորդեր, չեմ կարծեր, որ այսպիսի պարագաներում մէջ կացութեան վրա միտադին տեսութիւն մը ունենալէ ուրիշ բան կրնանաք ընել: Այն կացութեան մէջ, ուր կը գտնուինք, նորէն մենք ետ կը դառնանք փորձ մը ընելու, որպէս զի պարտաւորենք Գուրը—սովորմանը, որ հիմա թիրաքիտ իրական կառավարութիւնն է—լաւացնելու համար իր ձեռքով ժողովրդին վիճակը: Կարող է ազնիւ մարքիզը ըսել մեզի, թէ այդ ուղղութեան մէջ ոչ և է յառաջդիմութիւն եղած է: Կարծեմ թէ այսպիսի զեկուցում մը ամբողջ այս խորհրդարանը հրճուանքով և գոհունակութեամբ պիտի ողջունէ:

«Շատ բան ըսուեցաւ, իմ լորդեր, Արեւելքի մէջ Ռուսիոյ հետ մեր յարաբերութիւններու մասին, և կրնայ ըլլալ, որ այս յարաբերութիւնները վարելու զփութարութիւնը շատնայ, երբ Ռուսիա յիշէ թէ զինքը ինչ ճամբու մէջ ձգեց Պերլինի դաշնագիրը, զոր ես միշտ նկատած եմ իբր շատ աղետաբեր դաշնագիր մը: Տարակոյս չի կայ թէ Ռուսիա խորապէս զգացուած է, թէ երբ ինք անանկ զինքի մը մէջ էր, որ կրնար ապահովել հայերուն իրենց ընդհանր բարենորոգումները, զինքը սակայն պարտաւորեցին միւս պետութիւնները ետ քաշուիլ այն դիրքէն, որուն տիրացած էր այնքան արիւն և գանձ վատնելով: Ինչ որ կարելի է ընել հիմա և ես կողմնակի ազնիւ մարքիզին կարծիքի այն յայտարարութիւ-

նի գաճաճ թշնամիները, յօդուածի բուն իմաստը մի կողմ դրած, հակառակ դրական պատշաճագիտութեան, թող տուեցին իրանց՝ Արչէն երէց ստորագրութեան տակ կ'ամաւ ծածկված անձի ու լինելը հրապարակ հանել, որպէս զի ժողովրդի առաջ հանդիսացնեն Արիստակէս եպիսկոպոսին իբր ըմբոստ իր իշխանաւորի դէմ:

Գեռ երէկ հէնց լուր տարածվեց թէ Վահագն Կաթողիկոսը մտադիր է «Արարատի» խմբագիր կարգել Գալուստ Տէր-Մկրտչեանին, իսկուշի նոյն խաւարամիտ մամուլը սաղբերի մի անձունին աղաղակով՝ փորձեց մինչև երկինք հանելու «Արարատի» ֆարամեան և ընկ. խմբագրական երևակայական արժանիքները և հասկացնելու թէ Տէր-Մկրտչեանը, երբ մի ժամանակ խմբագիր էր, պաշտօնական «Արարատի» էջերում զետեղում էր յօդուածներ, հաշիւներ, անկարկներ Խլմիստի միաբանութեան բարձրաստիճան անդամներին դէմ, որ չ'ատ ան պատշաճ էին գտնում պաշտօնական հանդիսի խմբագրի համար:

Ստորագրութեան, կարգապահութեան, պատշաճագիտութեան պաշտօնական այդ եղբւր հրապարակաւորները այսօր աչքները փակում են, որ չը տեսնեն և կամաւ խուսափում են իրանց դաւանած տեսակետներով ըննադատելուց «Արարատի» զեկտեմբերի ամսատետրում տեղված ֆարամեան և ընկ. ստոր անկարկներով լի յօդուածը՝ «Հոգևորականի առաջնորդը դադարեց վերնագրով: Այո, լուրս են նրանք» քաջ հասկանալով, որ Խլմիստի պաշտօնական «Արարատ» հանդիսի այդ յօդուածի թունալից հարցականներն ու անկարկները ուղղակի ուղղված են Խլմիստի հոգևոր ծայրագոյն իշխանութեան՝ հայոց Կաթողիկոսի դէմ:

«Մշակի» մէջ ժամանակին լոյս տեսաւ կաթողիկոսական այն կոնդակը, որով հոգևոր պետը պաշտօնապէս լուծուած է Շաւաթում թեմական դպրոցի խնդիրը, որ ոչ ում է նաև դպրոցի տեղը իսկ «Արարատ» պաշտօնական ամսագիրը իր յօդուածով ոչ միայն չապականված միջնորդութեան փչացած հասարակութիւնը անուանելով, ցոյց է տալի թէ որպիսի սխալ է գործել հայոց Կաթողիկոսը Բագուն ընտրելով դպրոցատեղի, այլ և թող է տալիս a la «Новое Время», յանդիմանաբար և անհետաձուարձութեամբ կ'ամսակած տածել թէ՛ «Արդեօք հոգևոր կրթութիւնը ստաւ համար է», և՛ ինչ-

նը, որով շատ պատկերաւից պարբերութեամբ մը յայտարարեց, թէ Արեւելքի մէջ Ռուսիոյ ընդհանրապէս քաղաքականութիւնը հնչած քաղաքականութիւն է:

Լօրդ Սօլզբըրի. Չեմ կարծեր, որ ճշգրտապէս այդ բառերը գործածած ըլլամ:

Լօրդ Քի մպրլի. Կարծեմ դուք հակառակութիւն չեմք:

Լօրդ Սօլզբըրի. Կարծեմ ըսի թէ ես կը մտածեմ, որ պետութիւններուն մէջէն Ռուսիան զատելու, իբր միակ պետութիւն, որուն հետ այս երկիրը ընդդիմադրութեան մէջ պէտք է գտնուի, հնչած քաղաքականութիւն է:

Լօրդ Քի մպրլի. «Ինչ ատանկ ըլլայ, այդպիսի յայտարարութիւն մը ես կը նկատեմ իբր շատ կարեւոր, և կը փափագեմ ապահովել ազնիւ մարքիզը, որ խոնարհաբար իրեն համարեմ եմ: Այն կարճ ժամանակամիջոցին, ուր պատիւ ունեցայ արտաքին գործերը վարել, ջանացի այդ սկզբունքին համեմատ գործել: Ամէն ջանք ըրի ձեռք բերելու համար Ռուսիոյ աջակցութիւնը այդ գործի մէջ, և մինչև մէկ յայտնի ատորձան զի ուրախ էի այն ամէն առիթներուն համար, որով կրնայի ապահովութիւն տալ ռուսական կառավարութիւն, թէ անցեալին մէջ ինչ որ ալ եղած ըլլայ, ապագային համար մեր կէտ նպատակին է, ուր որ կարելի է, Ռուսիոյ հետ միասին գործել:

Իմ լորդերս, յոյսերուս մէջ խառնեցայ Երկու վայրկեան մը, ինչպէս պարզորէն ցոյց տուին խորհրդարանին առջև դրուած թուղթերը, ուր ռուսական կառավարութիւնը պատրաստուած չէր աւելի առաջ երթալու այն ուղղութեան մէջ, ուր մենք կը փափագէինք երթալ: Այս հանգամանքներուն մէջ ազնիւ մարքիզին ընթացքը, որ էր պետութիւններուն օժանդակութեանը դիմել, մնացած միակ միջոցն էր: Ինչ որ մենք կը փափագէինք գիտնալ այն է՝ թէ իր

պէս մի նոր Ամերիկա դատած՝ չեղում է. «հանկարծիքի հիւանդոտ և ցաւալի կողմը»: Յօդուածագիրը աւելի հեռուն է գնում, համարձակվելով հեղեղական հարցեր ուղղելու. «Ո՞վ պէտք է կառավարէ այդ հաստատութիւնները և նոյնապէս հոգի ներշնչէ՞ արդեօք այդ մասին ևս մտածվում ու հոգացվում է»: Լսեցէք:

Որտեղ է ձեր ստորագրութեան պատշաճագիտութիւնը, ուր է ձեր կարգապահական արթնութիւնը: Զգում էք արդեօք, թէ ուր է մըրդում ձեզ ձեր կիրքը, ձեր անձնական մանր հաշիւները:

Խիստ մեծ դժկամակութեամբ հանդէս հանեալով ֆարամեան և ընկ. խմբագրական «փառաբանված» ժողովի վարմունքը, աւելորդ չէնք համարում մի երկու խօսք էլ տալ «Արարատի» աստուածաբան յօդուածագրի այն մտքերի առիթով, որով «առնուազն անհամեստ (տեւեք) ու է համեստութեան մասին խօսում» երևակայութիւն է՝ համարում կարելի թէ (Բագուն) «ապականված միջնորդութեան ու փչացած հասարակութեան մէջ», զարեց հիմնել կարող է կենանքի թերութիւններն ուղղող՝ գործիչներ տալ:

«Հոգևորական, աւետարանական և բարոյական» հոգեւոր ոգևորված յօդուածագրի սխալականութիւնը չօգտիւնի օրինակներով ցոյց տըւած լինելու համար, հարկադրված ենք յիշեցնելու աստուածաբան քննադատին, որ հրէական աղբի չապականված միջնորդութեան և փչացած հասարակութիւնը՝ ծնեցին բարոյապաշտ պաշտօնականներին Աստուածային վարդապետին, այդ գաղափարներն անձնադրութեամբ տարածող առաքելաւորներն, նահատակներին, որ Խլմիստի ձեռքով 23 տարի գոյութիւն ունենալով հանդերձ, չը տուեց ոչ մեր հոգևոր հաստատութիւնները կառավարող շնորհալի գործիչներ և ոչ էլ հոգևորական, աւետարանական ու բարոյական հոգի ներշնչող կրօնաուսուցիչներ, չափեց հասարակական գաղափարական գործիչներ, թէ և ճեմարանը գտնվել և և գտնվում է Արարատեան աշխարհում, Մասեաց ստորոտում, Մայր-Արաքսի ափերում, Մեսրոպ-Մատթէի, նահատակ կոյսերի վկայարաններ մօտ, հայութեան կրօնական օրբալարում — Խլմիստի հոգևորութեան ներքոյ, հրէական կրօն «հարց և տեսրց» հասարակութեան մէջ է՝ որ ամենից զխաւորն է՝ Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցու

այս ջանքին մէջ ոչ և է յաջողութիւն ապահոված է: Թէ և կանխաւ չեմ կրնար երեւադրել, թէ ինչ պիտի ըլլայ մեր կարծիքը, երբ տեսնենք թուղթերը, սակայն կարծեմ կրնամ իմ ազնիւ բարեկամներու և իմ կողմէ լսել, թէ ազնիւ լորդը ոչ և է ջանք չէ խնայած ձեռք բերելու համար թիշ մը յատուկ դարման այն սոսկալի աղէտներուն, որոնց ներքև կը տատալին սուղթանին հայտարարութիւնը: Կը զգամ թէ խնդիր ամենամեծ կարևորութիւն ունի, և կը կարծեմ թէ ազնիւ մարքիզը պիտի ընդունի թէ ամենաթնթիւն փափագ մը իսկ ոչ և է կերպով երևան չեկաւ նորին վեհափառութեան կառավարութիւնը այս խնդրին մէջ նեղելու նպատակով (Ծախեր): Կը հաւատամ թէ ոչ միայն իմ անձնական կարծիքս յայտնած կըլլամ, այլ նաև իմ շուրջ գտնուողներուն ալ, երբ ըսեմ թէ մենք պէտք է պատրաստ գտնուինք սրտագին աշակցութեան տալ նորին վեհափառութեան կառավարութեան այն բոլոր անօրինութիւններուն մէջ, զորս գործադրել յարմար կը դատէ: Գալով առանձինն գործելու, հաճեցով կարողացի ազնիւ մարքիզին Գիլտօլ ըրած այն յայտարարութիւնը երբ, առանց ամենադոյն նշան մը տալու թէ առանձինն գործելու պատրաստուած է, ըսաւ թէ ինք առնցմէ չէ, որք չիբր անհապրի մէկ կողմ կը դնեն ինչ ինչ պարագաներու մէջ առանձին գործելու գաղափարը: Զեմ կարծեմ, որ ոչ և է կերպով փափագել ըլլայ առանձին գործելու գաղափարը մէկդի դնել, երբ առիկայ կը բաղկացվի առանց վտանգելու աշխարհի խաղաղութիւնը: Եւ այս բանին մէջ ալ կը համակրեմ ազնիւ մարքիզին՝ թէ առանձին գործողութիւնը, երբ Եւրոպայ կրնայ պատերազմին մէջ ընկղմել, երբեք չի կրնար արդարաւաճ և պէտք չէ ձեռնարկուի:

(Կը շարունակվի)

մ է. «Հան-  
դուր»։ Յօդ-  
համարձակ-  
«Ուլ պէտքը  
ը և նոցա  
արարական  
մտածվում  
պատշա-  
պահական  
նր է մը-  
ան մանր  
էս հանե-  
«Կառա-  
որդ» չենը  
արարատի  
երկր առի-  
(տեսէնը,  
երկակա-  
գուր) «Հա-  
հասարակ-  
է և կենս-  
ր տալ։  
բարոյա-  
սխալա-  
ցոյց տը-  
նը յիշեց-  
հիշական  
ացած հա-  
նարակա-  
բարձր  
առա-  
ածնի ձե-  
սով հան-  
տուրիւն-  
ը և ոչ էլ  
արարական  
հասարա-  
կ ձեւում  
ունենալ  
ը-Արար-  
սկ կոյսե-  
րոնական  
րութեան  
«հա-  
նարան է-  
կեղեցու  
պահոված  
թէ քնչ  
ը թուդ-  
նիւ բա-  
նիւ լոր-  
եւու հա-  
կարի ա-  
ին սու-  
ինդրը  
կարծեմ  
ամենա-  
կ երկան  
սրովի-  
ով (Մա-  
նանական  
չուրջ  
ը պէտք  
ցուրին  
տուրիւն  
որս գոր-  
անձին  
արքիւրն  
երը, ա-  
անձին  
ինը ա-  
կ կողմ  
ունանին  
ը և է  
ընդուն-  
կը բաշ-  
աղաղու-  
մակրեմ  
ովինը  
նկղմել  
չէ ձեռ-  
ակի)»

հաւատարմագոյն զաւակները ընդհանուր տես-  
չական զեկավարութեան տակ...

Մ. Ե.

ՆԱՄԱԿ ԲԱՌՈՒՄԻՑ

Յունվարի 15-ին

Նորովիւններ իսկապէս շատ կան մեր քա-  
ղաքում, բայց այս նամակը կը ցանկանայինք  
նուրիւնէլ այն ուրախալի երեկոյններէ մէկն, որ  
վերջներս սկսել են նկատուիլ մեր դրացի վրացի-  
ների մէջ։ Անկեղծօրէն պէտք է խոստովանել,  
որ այդ հասարակութիւնը այլ ևս այն հասարա-  
կութիւնը չէ, որ մի քանի տարի առաջ սուրը  
ձեռքին փնտռում էր ոչնչացնելու «կացիա Ա-  
ղամիանի» հեղինակին (իշխ. իշխ. ձաւնավա-  
ձէին) այն պատճառով, որ յարգելի հեղինակը  
աշխատում էր շանթահարել իր ազգի թմբած և  
անչարժութեան մասին լսած անձամասնութիւնը։  
Այդ գրքի մէջ դուրս է բերված մի հարուստ  
կառուածատէր իշխան, որը թէ կառուածները և  
թէ ամեն ինչ անտէր ու անհոգ թողած՝ ամ-  
բողջ օրերով, ծուլանալով մինչև իսկ կրկնա-  
վարութիւնը հաջնելու, տան յատակի վրա թաւալ  
է տալիս և իր ամուսին իշխանուհու հետ գրաւ-  
ներ բռնում, թէ առատաղի վրա քանի ճանձ  
կայի Եւ ահա այդպիսի և նման մտրակութիւնից  
յետոյ՝ այդ ճանձեր համրող հասարակութիւնը  
այսօր սկսել է արթնանալ և դիմել դէպի մտա-  
ւոր առաջդիմութիւնը։ Հետաքրքրեցեք նը-  
րանց լրագրութեամբ և կը տեսնէք, որ նը-  
րանք զվարարակալ զբաղված են ուսումնա-  
բաններ բաց անելու հարցով։ Այդ դեռ  
ոչինչ։ Իր սեփական միջոցներով բացած ու-  
սումնարանի դռները վրաց հասարակութիւնը  
բաց է արել վրացական մասնագէտների և  
այլ չէրէջ գեղերի մասնագէտների առաջ։ Բաթու-  
մի չընկալալ վրաց ուսումնարանների սաների  
10—20% թուրք, չէրէջ, լազ, չէչէն, աբխազ  
և այլ ցեղեր են։ Սա ուրախալ երեկոյն է։

Ահա այդ իսկ նպատակի՝ «Գրագիտութիւն  
տարածող ընկերութեան» օգտին էր վրացիների  
երկոյթը, որ երէկ տեղի ունեցած մեր քաղա-  
քայի կրթում, և որը անագին բազմութիւն էր  
գրաւել, այնպէս որ կանգնելու անգամ տեղ չը  
կար։ Երեկոյն անցաւ շատ չքեղ։ Երեկոյնի  
նպատակը զվարարակալ պայմաններից մէկն  
այն էր, որ այդ ժողովուրդը իսկապէս ընդունակ էր ու-  
րախանալու և քաջին համեմատ զգացվելու։  
Նրա ուրախութեան մէջ հոգ չը կալ և ոչ էլ  
զգացվելու մէջ՝ չափի կրեցին, նուազեցին՝ թէ  
տեղական և թէ եւրոպական եղանակներ։ Երե-  
կոյնը յարգելով երգեր նոյնպէս և յայտնի երգ-  
չուհի Աղեւ Բօրգի։ Մեծ տպաւորութիւն թը-  
ղեցին Աղակի Մերթիլիի օրվայ հանդիսին հա-  
մապատասխանող ոտանաւորները, որի ճամար  
զգացված հասարակութիւնը մի քանի անգամ  
բեմ կանչեց հեղինակին՝ ծափահարութեան և  
վրացերէն «վաշա» (կեցցէներ) ահագին դըր-  
դինով։ Գրանից յետոյ սկսվեց լեզգիական, որի  
մէջ, ի հարկի, նոյնպէս փայլում էին նրբակազմ  
իշխաններ և իշխանուհիներ։ Լէզգիականի հե-  
տեցին եւրոպական պարերը և այդպէս մէկը  
միւսին յաջորդելով՝ գրեթէ մինչև լոյս տեսեց  
երեկոյնը։

Ուր է, թէ մեր քաղաքի հայերն էլ ընդունակ  
լինէին այդպիսի, կամ գոնէ զրա կէտի չափ և-  
րեկոյնը կազմելու թշուառ գաղթականներին օգ-  
նութիւն հասցնելու համար, մասնաւորապէս վրաց-  
տա՝ կարելի է առել, որ ոչ մի ազգի ներկայա-  
ցուցիչ չի մերժի ներկայ լինելու այդ համակ-  
րելի նպատակով արվող երեկոյնին։ Բայց ուր է  
մեր քաղաքացիների մէջ այդպիսի մի չնորը և  
կանանց մէջ էլ զրան համապատասխան ընդու-  
նակութիւն։

Գ. Գրիգորեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ձաւալ-Օղլի, յունվարի 7-ին

Յօդու թիւրքացի գաղթականների՝ Գնդեան  
երկրորդական և առաջում «Այսօր տուն է» ման-  
գալով հաւաքեցին 72 բուրլի, որի վրա հա-  
սարակութիւնը իր ընդհանուր փողերից աւելաց-  
նելով 28 բուրլի, ընդամենը 100 բուրլի—ու-  
ղարկեցինք Կարսի յաջորդին, որպէս զի այդ  
փողը գործ դնի նոյն տեղի գաղթականների  
համար բացվելիք արհեստանոցի համար։

Ի դէպ, յայտնում ենք մեր չնորհակալութիւ-

նը ս. Աստուածածին եկեղեցու երէցփոխ պ.  
Նիկողայոս Հայրապետեանցին և մանաւանդ  
Տէր-Գրիգորեան քոյրերին, որոնք, ինչպէս ամեն  
մի հանրագումար գործի, այսպէս էլ այժմ՝ աջակ-  
ցեցին՝ փող հաւաքելով իրանց շրջանում։

Մի խումբ երիտասարդներ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասեան կառավարչապետի օգնական կոմս  
Տատիշչիկի հանգուցեալ ամուսնուն՝ կոմսուհի  
Ս. Գ. Տատիշչիկային «Кавказъ» լրագիրը նուրի-  
րէլ է մի առաջնորդող յօդուած, որի մէջ ոգե-  
ւորված կերպով նկարագրում է հանգուցեալի  
անձնական առաքինութիւնները, իբրեւ վերին  
աստիճանի բարի և կարեկից կնոջ։ Հանգուցեալ  
կոմսուհին թիֆլիսում չը պէտք է թաղվի, այլ  
նրա մարմինը պէտք է փոխադրվի Մոսկվա։

Ամենայն հայոց կաթողիկոսը, ինչպէս հայոց-  
դում են տեղական լրագիրները, յունվարի 18-ին  
ուղարկեց Կովկասի կառավարչապետի օգնական  
կոմս Տատիշչիկին հետեւեալ հեռագիրը. «Այս  
բուլէտի ստացալ ձեր պաշտառափառութեան ա-  
մուսնու մահուն գոյով։ Մաղթում եմ Ամենա-  
բարձրեալին՝ հանգիստ չնորհել հանգուցեալ  
կոմսուհու հոգուն և ձեզ ոյժ պարգեւել՝ այդ ան-  
փոխարինելի կորուստը տանելու իսկական քը-  
րիստոնէական համբերատարութեամբ, դիմելով  
Աստուծոյ ողորմութեանը։ Թող միւրթարէ ձեզ,  
սիրելի կոմս, Հոգին Սուրբը։»

Ինչպէս յայտնի է, մի քանի տարի սրանից  
առաջ Ալեքսանդրօպօլի հոգեւոր կառավարու-  
թեան մէջ բացվել էին 24 հազար բուրլի վառ-  
նելու մի շարք դէպքեր։ Կիրեղ եպիսկոպոս  
Սրապեան, որ ընդի էր նշանակված, արգարաց-  
րեց Ալեքսանդրօպօլի այն ժամանակվայ յաջորդ  
Սաթուհեան վարդապետին։ Այժմ, ինչպէս տե-  
ղեկանում ենք հաստատ արեւիւրից, այդ գործը  
նորից քննութեան է առնվել Եմիլիանի Սինո-  
դում, որը, կեղծ համարելով նախկին քննու-  
թիւնը, որպէս է նոր քննութիւն կատարել  
Կարսի յաջորդ Եղիշէ վարդապետ Մուրադեանից  
միջոցով։ Յոյս ունենք, որ վերջապէս կը պարզ-  
վի այդ մութ գործը։

Ժանտախտի մուտքը կայսրութեան մէջ խա-  
փանելու նպատակով, ներքին գործերի մինիստ-  
րը կարգադրութիւն է արել՝ բանալ բժշկական  
—դիտողական կէտեր Պարսկաստանի, Աֆգա-  
նիստանի և Կաշգարի ուսուցչ սահմանների  
վրա հետեւեալ տեղերում։ Անդրկասպեան շըր-  
ջանում—Հաւուզան, Դուշակ, Թախթաբազար և  
Կուշկայ. Թուրքեստանի գեներալ-նահանգապե-  
տութեան մէջ—Կէմիւր, Քէրքի, Այվաջ և Իրկէշ-  
տան. Մէմլիշէնայի շրջանում—Աթբաշ, Կովկա-  
սի սահմանադիւսում—Աստարա, Բէխուսլար,  
Խուրաֆէրին, Ձուլֆա և Շահթախթի։

Մօսկվայից, պ. Մ. Երրորդեանց «Մշակի»  
1897 թիւ մի օրինակը նուրիւնց Եկատերինոգրա-  
րի հայոց դպրոցին։

ԲՈՐԺՕՄԻՑ մեզ գրում են. «Բօրժօմի հայերը,  
չը կամենալով անտարբեր մնալ դէպի իրանց  
գաղթական եղբայրների թշուառութիւնը, մը-  
տադիր են յօդու նրանց մի պարահանդէս սար-  
քէ։ Յայտնում ենք մեր չնորհակալութիւնը տի-  
կին Շուշանիկ Միրզոյեանցին, որը ջանք է  
գործ դնում այդ պարահանդէսի համար և ցան-  
կանում ենք աջողութիւն։»

ՍՈՒՄԱՄԻՑ մեզ գրում են. «Այս շաբաթ մեզ  
մօտ տեղի ունեցաւ երկու եղեռնագործութիւն։  
Տեղացի մի չարչի հիշային հրաւիրում են Փլէվի  
գիւղը՝ մի վրացու հարսանիքի համար աղարան  
ծախելու։ Հրէան, ծախելով 20 բուրլու ապ-  
րանք, վերադառնում է ձիով Սուրամ, սակայն  
ապրանք գնողի եղբայրը հետամուտ է լինում և  
ճանապարհին հրացանաղարկ անում՝ նրան, տա-  
նելով թշուառի ունեցած 30 բուրլին։ Միւս ե-  
ղեռնագործութեան զոհ դարձաւ մի հայ պան-  
դուկապետ։ Սպանութեան պատճառն եղել է  
այն, որ այդ հայը փայտով ձեղքել էր մի վրա-  
ցու գլուխը այն պատճառով, որ չէր վճարել  
լուրջ յուղմունքներ կը յարուցանի և կարող է  
իր խմած գինու արժեքը. այդ դէպքից վերջինը  
խեղազարվել է։ Վերաբերված ընկերը՝ մի հայ, թէ ինչու  
այժմ ամբողջ թիւրքաց մամուլը,

վրէժխնդիր է լինում ու սպանում նրան։ Երկու  
սպանութիւնների յանցաւորները կալանաւոր-  
ված են։»

Թէ՛ ԱՌԻՑ մեզ գրում են. «Յունվարի 2-ին,  
հայոց փակված դպրոցների դահլիճում տօնա-  
ծաւ կար, որը զուտ աշակերտական բնուորու-  
թիւն ունէր։ Տօնածառին մասնակցում էին ուս-  
սաց ս. Նունէի օրիորդաց դպրոցի և հայոց նախ-  
կին օրիորդական դպրոցի աշակերտուհիների մի  
մասը։ Հանդէսն սկսվեց ժամի 3-ին կէսօրից յե-  
տոյ և վերջացաւ երեկոյան 8 ժամին։ Աշա-  
կերտուհիները պարեցին տեղական և եւրօպա-  
կան պարեր և տօնածառի ընծաներ ստանալով,  
ուրախ տպաւորութեամբ ցրվեցին իրանց տը-  
ները։»

ՆՈՐ-ՆԱՌԻՑԻԱՆԻ ԹՈՒԹԻ ԳԵՂԵՐ հայոց դըպ-  
րոցի յիսուկեան հոգաբարձութիւնը խնդրում է  
մեզ տպագրել հետեւեալը. «Սրանով յայտնում  
ենք մեր խորին չնորհակալութիւնը Նոր-Նախի-  
ջեանի փոխանորդ Միխիթար վարդապետ Տէր-  
Մկրտչեանին, որը իր եռանդուն աշխատու-  
թեամբ նպաստեց մեր գիւղի եկեղեցական ծխա-  
կան երկղասեան ուսումնական յիսուկեան  
դուլիս գալուն, հակառակ բազմաթիւ արգելը-  
ներին։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

1896 թիւ վերջում Լօնդօնում լոյս տեսաւ  
մի գիրք «The fall and resurrection of Turkey»  
վերնագրով։ Հեղինակը, H. Antony Salmon ցան-  
միաբն է յայտնում, որ Թիւրքիայի հարցը այժմ  
շատ մօտ է վերջնական լուծման։ Թէ քրիս-  
տոնեաները և թէ մասնատականները վճռել են  
բէֆօրմներ ձեռք բերել և Աբդուլ Համիդի ան-  
կուլը, նրա կործինով, միայն ժամանակի խն-  
դիր է։ Հեղինակը շատ մօտ յարաբերութիւննե-  
րի մէջ է երկուստար Թիւրքիայի շարժման պա-  
տաղութների հետ և տալիս է մանրամասն նկա-  
րագրութիւն թէ նրանց պահանջների և թէ այն  
դրութեան, որի մէջ գտնվում է այժմ Կ. Պօլի-  
սը, չնորհիւ համիդական վարչական սիստէմի։  
Գրքում պատմված են շատ դէպքեր վարչական  
զանազան շրջաններից վերցված, նոյնպէս և շատ  
անեկզոտային պատմութիւններ Թիւրք գրաքն-  
նիչների գործունէութիւնից։ («Times»)

«НОВОСТИ» լրագրի Կ. Պօլսի թղթակիցը գը-  
րում է. «Երեւումն հոգեւորաց յետոյ աղապտու-  
թիւն ստացան միմիայն 150 հայեր, տղամար-  
դիկ և կանայք։ Հայոց պատրիարքարանում ա-  
մեն օր հեռագիրներ են ստացվում, որոնցով  
զանգատվում են, որ դանդաղ կերպով է գոր-  
ծադրում ներման չնորհում։ Բոլոր աղապտած-  
ները, սուլթանին հաւատարմութեան երդումն  
տալուց յետոյ հայոց պատրիարքարանում, հայ-  
երենի են ուղարկվում, թէ նրանք միայն Կ.  
պօլսեցի չեն և չունեն այստեղ ազգականները։  
«Երկրպագութեան պալատում շատ բարկացած են  
Ռուսաստանի դէմ և շատ դժգոհ են ուսուցչ  
դեպատից։ Սակայն, այժմ բոլոր դեպատիւնների և  
սուլթանի մէջ համարեա կատարեալ պառակ-  
տումն է տիրում։ Գեաւալանները մեծ զաղա-  
նիքով են չընկալաւոր իրանց խորհրդակցու-  
թիւնները, որոնք ինչպէս ասում են, պարտա-  
ւորական պէտք է լինեն Թիւրքիայի համար։  
«Բայց սուլթանը դեռ ևս զահի վրա է և  
հաստատ համոզված է, որ իր պահանջութիւնը  
կախված է Թիւրքիայի ներկայ թէժիւրից։ Կարելի  
է հաւատացած լինել, որ նա միայն ուժին կը  
գիշի։ Սամանեան կառավարութիւնը այժմ  
իւրացրել է մի կատարեալ մաքրալէկական բա-  
ղաբանութիւն։ Զգալով, որ համում է ժա-  
մանակը, երբ պետութիւնները իրական բէֆօրմ-  
ներ կը պահանջեն և չեն գոհանալ թղթի վրա  
գրված բէֆօրմներով, սուլթանը աշխատում է  
ապացուցանել Եւրօպային, թէ Թիւրքիայի հա-  
սարակական կարծիքը կատարելապէս դէմ է որ  
և է օտար միջամտութեան թիւրքաց գործերում  
և որ պետութիւնների կողմից սուլթանի վրա  
գործ դրված ամեն անհայտ ճնշումն ներքին  
լուրջ յուղմունքներ կը յարուցանի և կարող է  
մինչև անգամ աղէտի պատճառ դառնալ։ Ահա  
խեղազարվել է։ Վերաբերված ընկերը՝ մի հայ, թէ ինչու  
այժմ ամբողջ թիւրքաց մամուլը,

հաղանդվելով տրված հրամանին, ջերմ կերպով  
խօսում է օտար միջամտութեան դէմ։»

Լրագիրները հաղորդում են, որ կրօնական  
ֆանատիկոսութիւնը աճում է մասնատական աղ-  
գաբանութեան ստորին խաւերի մէջ։ Այս օ-  
րերս Կ. Պօլսի թիւրքերի մէջ մեծ յուզմունք  
սկսվեց այն լուրի պատճառով, թէ մի ժան-  
դարմին գիշերը երեսացել է սուրբ մարդը և  
հրամայել է նրան հետեւել իրան դէպի Եւր-  
միկիթը և վերցնել այն տեղից Եւրքի սուրբ,  
որովհետեւ բոլոր գեաւուրներին ջնջելու ժամը  
հասել է։

Յունվարի 18-ին Լօնդօնում կայացաւ մի ժո-  
ղով, որի նպատակն էր պարզել և չեղտել այն  
միտքը, թէ բէֆօրմները Թիւրքիայում հարկաւոր  
են ոչ միայն հայերի կամ քրիստոնեաների, այլ  
և բոլոր մասնատականների համար։ Ժողով հա-  
ւիրողն էր մի ընկերութիւն, որի հոգաւորութեան  
առարկաներն են Թիւրքիայի քաղաքական բան-  
տարկեալները։ Ժողովը բաղմամբ չէր, բայց  
կազմված էր ներկայացուցիչ-անձերից։ Բացի այն-  
պիսի յայտնի անձնաւորութիւններից, ինչպէս  
են Ստիվենսօն, Բրայս, Մակկլօր, Մօրտօն, Իրս-  
տել, Կրօն և Բարիսները, ներկայ էին Կարօ Գրա-  
դէսեան, տիկին Ստիվենսօն, օրիորդ Պաուլին  
Աղանուր, Խալիլ Զիա-էլ (Թիւրքական բէֆօրմի  
լիգայի կողմից) և պ. Թիւրքօղլու։

Նախագահ Յորէնիս Ստիվենսօն յայտնեց, որ  
իրերի դրութիւնը փոփոխութիւն է կրել և  
Թիւրքաց բունակաւորութեան զօները այժմ ոչ միայն  
քրիստոնեաներն են, այլ և մասնատականները։  
Ոչ պակաս քան 4000 մասնատական այժմ իբրեւ  
քաղաքական յանցաւորներ նստած են բանտե-  
րում։ Այդ պատճառով պէտք է ձայն բարձրաց-  
նել Թիւրքիայում տանջվող և մասնատական աղ-  
գաբանակութեան մասին։

Կանօնիկոս Մակկլօր յայտնեց, որ բոլորի ցան-  
կութիւնը այն է, որ Թիւրքիայում լաւ վարչու-  
թիւն լինի։ Բոլոր չարքենայի կենտրոնը Կ. Պօ-  
լսն է, որտեղ պէտք է այնպիսի կարգ հաստա-  
տել, որ պաշտպանված լինեն բոլոր հպատակնե-  
րի իրաւունքները։ Գրքը և կենցաղակաւորութիւնը  
Բրայս ասաց, որ բարեմիտ թիւրքեր միշտ և  
ղեւ են և կան, իսկ քրիստոնեայ աշխարհը թըշ-  
նամութիւն չէ ունեցել ոչ մի տարրի դէմ, այլ  
ցանկացել է, որ բոլորն էլ առաջադիմին մի-  
մեանց չը խանդարելով։

Ուրիշ շատ ճառախօսների խօսակցութիւննե-  
րից յետոյ որոշվեց դիմել կառավարութեան  
յայտնելով, որ ներկայ ժողովը բարձր է հա-  
մարում լուծել անդլ-թիւրքական դաշնակցու-  
թիւնը և ուրեմն դէպի Թիւրքիան ոչ մի  
պաշտպանողական դեր չը վերցնել Անգլիայի  
վրա։

Եւրօպայի մի հին դիպլոմատ, կոմս Բէնէ-  
դէտի, հրատարակել է «Revue des Deux Mon-  
des» հանդիսում մի ընդարձակ յօդուած արեւ-  
ելեան հարցի մասին։ Այժմ գրեթէ ամեն օր հե-  
ռագիրը հաղորդում է Կ. Պօլսից, թէ դեպան-  
ները այսօր նորից կը գումարվեն խորհրդակցե-  
լու համար։ Գեաւալանները—ասում են Բէնէդէտ-  
տի—վաղուց խորհրդակցում են. ներկայ 19-րդ  
դարի ընթացքում նրանք չարունակ խորհր-  
դակցում են, բայց նրանց խորհրդակցութիւնը  
ոչ մի հետեւեալ չէ արտադրում։ Այս ան քանա-  
կան թեւականներից, եւրօպական դիպլոմատիան  
միշտ եռանդուն վանքեր է գործադրել Թիւր-  
քիային նոր կեանք ներշնչելու, բէֆօրմների  
ծրագիրներ է յորինել նրա համար, փող է փոխ  
տուել, պաշտօնեաներ է հայթայթել, մի և  
նոյն ժամանակ պահպանելով սուլթանի վեհա-  
պետութիւնը, բայց չը նայելով այդ վանքերին,  
Թիւրքիան մնաց հիւանդ և գրեթէ մահամերձ։  
Ինչով պէտք է վերջանայ այդ ամենը, իսկ ակն-  
յայտ է, որ չուտով մի վերջ պէտք է լինի  
Հիւրիական ժամանակից Եւրօպային գուցէ ա-  
ջողվի աղապտել, բայց ինչպէս կարողանայ նա  
աղապտել իրան սպանապաղը ընդհանուր եւրօ-  
պական պատերազմից։ Գիպլոմատիան չէ կարող  
աղապտել Եւրօպային պատերազմից, նրան կարող  
է աղապտել միայն մի կամ երկու պետութեան  
ցոյց տուած անպայման վստահութիւնը և տրված  
լիազօրութիւնը՝ կարգի դնել Թիւրքաց գործերը  
«manu militari», այսինքն դէպի օգնութեամբ։

(№ 141) 11—15

1  
 մէջ  
 մեր  
 նախ  
 սիրո  
 եկե  
 մու  
 բէր  
 պա  
 բիւ  
 խնդ  
 մա  
 սան